ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

29.11.23թ. N 02/16.4/15359-2023

<<ԴԷԿՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
պարոն Մխիթար ՄԱԿԱՐՈՎԻՆ
էլ.փոստի հասցե՝ deksllc@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի պարոն Մակարով

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ԴԷԿՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2022 թվականի ապրիլի 22-ին կնքվել է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀՔԿ-ԲՄԱԾՁԲ-21/13 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պատվիրատուի կողմից 2023 թվականի հունիսի 16-ին Պայմանագրի միակողմանիորեն լուծումը ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/14563/02/23 քաղաքացիական գործով 2023 թվականի սեպտեմբերի 26-ին օրինական ուժի մեջ մտած վճռով (այսուհետ՝ Վճիռ) ճանաչվել է ոչ իրավաչափ:

Ի կատարումն Վճռի՝ Ընկերությանը 2023 թվականի հոկտեմբերի 27-ին ծանուցվել է Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին N 2 համաձայնագրի նախագիծը՝ ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2023 թվականի նոյեմբերի 17-ը ներառյալ (15 աշխատանքային օր): Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել համաձայնագրի հաստատված (ստորագրված, կնքված) օրինակը, պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները, միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումները:

Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2023 թվականի նոյեմբերի 29-ից միակողմանիորեն լուծում է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2023 թվականի նոյեմբերի 29-ին կտեղադրվի www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների՝ միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագրերը կից վճարման պահանջագրերի հետ միասին սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանում Պատվիրատուի հաշվեհամարներին գումարները փոխանցելու նպատակով՝ համաձայն ներքոնշյալ աղյուսակի.

Պայմանագրի ապահովում				Որակավորման ապահովում	
Երաշխիքի գումար /ՀՀ դրամ/	Տուժանքի գումար /ՀՀ դրամ/	Երաշխիքի հաշվեհամար	Տուժանքի հաշվեհամար	Տուժանքի գումար /ՀՀ դրամ/	Տուժանքի հաշվեհամար
6 000 000*	119 000 000	900008000664	900005000758	357 000 000	900008000664

* 6 000 000 ՀՀ դրամ գումարի գանձումը բանկը տեղեկացրել է 2023 թվականի օգոստոսի 18-ի N 6771/03 գրությամբ, որը Վճռի հիման վրա վերադարձվել է Ընկերությանը 2023 թվականի հոկտեմբերի 30-ի N 02/16.4/14224-2023 գրությամբ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե վերը նշված վճարման ենթակա գումարները մինչև 2023 թվականի նոյեմբերի 29-ը փոխանցվեն ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանում Պատվիրատուի հաշվեհամարներին, ապա Ընկերության նկատմամբ չեն կիրառվի <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված դրույթները:

Հարգանքով՝

29/11/2023

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան Հեռ: 011621722

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

«——» ———— 20 թ